

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐՖԻՍԱՎԵՊԸ

ՄԱՐԳԱՐԻՏ ԸՐՂԱԹՔԱՇՅԱՆ

Հայտնի է, որ մեծ երգիծաբան Հ. Պարոնյանի ստեղծագործություններն իր խմբագրած երգիծաթերթերում լույս են տեսել մեծ մասամբ ժաժկանուններով կամ անստորագիր: Պարոնյանագիտությունը միշտ էլ զբաղվել է վերջիններիս բացահայտման հարցով՝ կատարելով մանրակրկիտ պրպտումներ ու հետազոտումներ: Դրանցից են «Ես», «Դուն», «Անիկա» ժաժկանունները, որոնք հանդիպում են «Մեղու», «Թատրոն», «Խիկար» պարբերականներում: Բանասեր Ա. Մանուկյանը, թվարկելով Պարոնյանի մի շարք ժաժկանունները, հիշում է նաև «Ես», «Դուն», «Անիկա» ժաժկանունները՝ Սակայն, ցավոք, հետազոտողը դրանք անվերապահորեն Հ. Պարոնյանին համարելու համար լուրջ կոպաններ չի ունեցել: Հետագայում թատերադետ-բանասեր Գ. Ստեփանյանը մերժում է Ա. Մանուկյանի առաջադրած վարկածը¹:

«Թատրոն» երգիծաթերթում լույս են տեսել մի շարք երկեր «Ես», «Դուն» ստորագրություններով, որոնց թվում և երկու ժավալուն գործ՝ «Հին աշխարհին խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» երգիծավեպը և «Նկարագրություն դիմաց և բնավորությանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» երգիծապատումների շարքը: Վերջինս իր ժանրով նման է Հ. Պարոնյանի «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» ստեղծագործությանը:

Դեռ 1874 թ. ապրիլին Հ. Պարոնյանը «Թատրոն»-ում հրատարակել է «Քաղաքական աշխարհագրություն» խորագրով մի երկ, անդրադառնալով Պոլսի հինգ թաղամասերի նկարագրությանը: Նույն թվականի հոկտեմբերից նա տպագրում է «Նկարագրություն դիմաց և բնավորությանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» երգիծական շարքը: Հետագայում, երբ Հ. Պարոնյանը տպագրության էր պատրաստում «Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ» երկը, մեծապես օգտվել է «Թատրոն»-ում տպագրված «Քաղաքական աշխարհագրություն»-ից ու «Նկարագրություն դիմաց և բնավորությանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» շարքի համապատասխան գլուխներից: Բերենք մի քանի օրինակ «Պտույտ»-ի և «Նկարագրություն» շարքի համընկնումներից, նախապես նշելով, որ վերջինիս մեջ նկարագրված են «Պտույտ»-ում տեղ գտած համարյա բոլոր թաղամասերը: Հոգնածաշարը մեծ մասամբ լույս է տեսել «Ես» ստորագրությամբ, մեկական հոգնած՝ «Վա-

¹ Ա. Մանուկյան, Հ. Պարոնյանի գրական ժառանգության շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 6, էջ 61—77):

² Գ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյանի գրական ժառանգության շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 137—146):

նախն» և «Կարկուտ» ստորագրություններով, և երեքն էլ անստորագիր. «Նկարագրություն» շարքի և «Պտույտ»-ի համեմատությունը ցույց է տալիս, որ Զ. Պարոնյանի շատ բնութագրումներ նույնությամբ առկա են երկուսում էլ: Օրինակ.

«... Ցավալին սա է, թե դպրոցական տղայոց մեծագույն մասն ի փողոցս հայերեն չեն խոսիր: Հայհոյությանց մեջ ունեցած վարժությունին սամաթիացոց երկրորդականը կը համարվին, բայց խոսած ժամանակին անոնցմե ավելի ուժով կ'աղաղակեն...» («Թատրոն», Կ. Պոլիս, 1874, թիվ 72, գեկտ. 23):

«... կիրակի օրերը եկեղեցվո մեջ երեք հարյուրեն ավելի մարդ չըլլար. զխավոր թապախ մը շրջագայության ելած ատեն տասնընորս ղրուշեն ավելի հասույթ չըլլար» (նույն տեղում):

«Այս թաղին մեջ հին աշխարհի երեւելի փաստաբաններն մեկ քանի անձինք կան, որոնք ո՛չ թե միայն քաղաքական փաստաբանության մեջ, այլ նաև աստվածաբանական փաստաբանության մեջ թաղեցոցմե մըրցանակ ընդունած ըլլալով, անոնք հիշյալ թաղին երեւելի ճարտասաններն ալ կը համարվին» («Թատրոն», Կ. Պոլիս, 1875, թիվ 82, հունվար 4):

«Արանց մեծագույն մասը օրն երկու անգամ շապիկ կը փոխեն...» («Թատրոն», Կ. Պոլիս, 1875, թիվ 83, հունվար 9):

«Հոս ալ արեւն չերելու համար ոմանք բուտրա կը գործածեն, բայց որովհետեւ այս գյուղին մեջ գիշերներն ալ արեւ կըլլա, անոր համար գիշերներն ալ կը գործածեն» («Թատրոն», Կ. Պոլիս, 1875, թիվ 133, մայիս 3):

«Այս թաղը Բաբելոնյան աշտարակ մը դարձած է վերջին հրկիզութենեն ի վեր: Նախորդ թաղեցոց մեծագույն մասն ասդին անդին ցրված և անոնց

«Դպրոցականներուն մեծագույն մասը փողոցներու մեջ հայերեն չեն խոսիր, սակայն երբ հայհոյել հարկ ըլլա՝ մայրենի լեզուն կը գործածեն և սամաթիացիներու երկրորդը կրնան համարվիլ» (Զ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1964, էջ 161):

«... կիրակի օրերը եկեղեցվո մեջ երկու հարյուրե ավելի մարդ չըլլար, և ժողովրդյան մեջ շրջաբերության հանված գանձանակին մեջ ալ հագիվ յոթանասունը հինգ փարա կը գոյանա» (նույն տեղում, էջ 158):

«Անցյալ դարե մնացած փաստաբաններ կը գտնվին հոս և որոնք աստուծո վերաբերյալ դատերը կը փաստաբանեն: Ասոնք ժողովրդյան կողմե վավերացված փաստաբաններ ըլլալով՝ Պեշիքթաշի ճարտասանները կը համարվին» (նույն տեղում, էջ 129):

«Այրերը հոս շաբաթն երկու անգամ շապիկ կը փոխեն» (նույն տեղում, էջ 130):

«Արեւն չայրելու համար՝ իգական սեռն, քիչ բացառությամբ երեսը բրինձի փոշի կը քսե. բայց Միշագյուղի լուսինն արեւու չափ կիզիլ ըլլալուն պատճառով՝ գիշերներն ալ կը գործածե այն փոշին...» (նույն տեղում, էջ 109—110):

«Այս թաղին ազգայիններն իրարու խոսք չեն հասկնար. լեզուները խառնված են հոն. վասնզի վերջին հրդեհեն ի վեր Պոլսո բոլոր թաղերն,

տեղն հաջորդած են գավառացի ազ-
գայինք...

Անգ հարուստ և փորը կուշտ մարդ
շատ չէ: Աղքատն ու արբեցողը չա-
փեն ավելի է:

Այնչափ վախկոտ են, որ քիչ մը
բարձր ձայն հանես, ամենքն ալ կը
զարհուրին ու կը փախչին» («Թատ-
րոն», Կ. Պոլիս, 1874, թիվ 64, հոկ-
տեմբեր 14):

«Անգործ շատախոսներ ալ կան...
Ասոնք աշխարհիս լույսեն գրեթե
զրկված կը համարվին:

Նոր երիտասարդությունն ավելի
թատերասեր է, քան թե ուսումնասեր:

Այս թաղիս սովորությունն է շատ
ուշ ամուսնանալ...» («Թատրոն», Կ.
Պոլիս, 1874, թիվ 66, հոկտեմբեր 16):

«... Հոն բնակող երիտասարդին մա-
զերը շուտով կը ճերմկցնե, բայց
ճերմկցնելեն վերջն ալ շատ կապ-
րեցնե, ասոր համար երիտասարդը
դեռ մազերնին չճերմկացած ուրիշ
թաղ մ'երթան և ուրիշ թաղերու մեջ
մազերնին ճերմկած անձինք բնակու-
թյուննին անգ հատատեն, շատ լավ
և օգտակար կ'ըլլա...

... Կանանց սեռը գեղեցիկ է և բա-
րեձև, կրթության հակամետ և տան-
տիկին: Այս թաղիս մեջ կանանց
տանտնությունը Իսկյուտարու և գրե-
թե ուրիշ շատ թաղերու մեջ տեսնված
չէ:

Արա՛ց սեռեն մեծագույն մասը
իրիկունսրը առանց օղի ըմպելու չը
կրնար հանգիստ գտնել... Բնակիչը
ընդհանրապես կը ծխեն և ո՛չ թե կու-
տեն, ալ չի տեսնիր սնուցանողը օդույն
գեղեցկությունն ու նրբությունն է»
 («Թատրոն», Կ. Պոլիս, 1874, թիվ 76,
դեկտեմբեր 27):

«... Եթե մեկը ի՛ մկրտութենն Փի-
լիսոս անվանյալ է, քիչ ժամանակ
վերջը կը տեսնես, որ անունը փոխեր
և Զամբինոս է դրեր...

ինչպես նաև գավառացի ազգայինե-
րեն գաղթականություն հաստատված
է հոս...

Հոս հարուստ և փորը կուշտ մարդ
չկա շատ. աղքատն ու արբեցողն չա-
փեն ավելի է:

Թաղեցիներն այն աստիճան վախ-
կոտ են, որ եթե քիչ մը բարձր ձայն
հանես՝ ամենքն ալ կը զարհուրին և
կը փախչին» (նույն տեղում, էջ 168—
170):

«...անգործ շատախոսներ կան, որք
կույր են մտոք...

Այս երիտասարդությունն ավելի
թատրոն կը շինե քան թե դպրոց...

Շատ ուշ կամուսնանան հոս...»
(նույն տեղում, էջ 193—194):

«Այս թաղին կլիման... երիտասար-
դի մազերն շուտով կը ճերմկցունե.
բայց ճերմկցնելեն վերջն ալ դեռ շատ
կ'ապրեցունե. ասոր համար երիտա-
սարդը դեռ մազերնին չճերմկացած
եթե ուրիշ թաղ մը երթան, և ուրիշ
թաղերու մեջ մազերնին ճերմկու-
ցած անձինք հոս գան՝ շատ լավ և
օգտակար կ'ըլլա...

Յինները գեղեցիկ են, բարեձև, կրթ-
թության հակամետ... Այս թաղի կի-
ներուն տանտնությունը Սկյուտարի
թաղերուն և ո՛չ մեկուն մեջ տեսնու-
ված է...

Մեծագույն մասն առանց օղի խմե-
լու չկրնար հանգիստ ընել. հոս ընդ-
հանրապես շատ կը ծխեն և քիչ կ'ու-
տեն... բայց գեղեցիկ օդով կը սնա-
նին» (նույն տեղում, էջ 198):

Պոյաճի գյուղցին շատ կը սիրե
յուր անունը փոխել: Կարապետը Քար-
լո և Մկրտիչը Պաթիստ կ'ըլլան հոս...

...եթե ասոնցմե մին առավոտուն կանուխ դիպվածով պատուհանը տեսնես, և կեսօրին կրկին տեսնելու դժբախտությունն ունենաս՝ կարելի չէ ճանչնալ...

Եթե գովելի բան մը ունին, այն ալ սա է, որ ստամոքսնին շատ ուժեղ է»։ (Թատրոն», Կ. Պոլիս, 1875, թիվ 131, ապրիլ 29)։

«Թաղական խորհուրդն որչափ անդամն որ կը բաղկանա, նույնչափ ալ կարծիք կը հղանա, մեկուն կարծիքը մյուսին չը հարմարիր... Լսածնիս նայելով թաղական խորհուրդուն մեջն մին կուղե եղեր, որ դպրոցն անգղիական դրությամբ կարգադրե, մյուսը գաղղիական, մյուս մը իտալական, ուրիշ մը գերմանական, հինգերորդ մը ռուսական, դրսեն մեկ երկու հոգի ալ հունական։ Թաղին քարոզիչ հայրն ալ կը պնդե եղեր, որ հայկական ըլլա» (Թատրոն», Կ. Պոլիս, 1874, թիվ 70, հոկտեմբեր 21)։

Կիներն ոմանք ...այնչափ կը փոխեն կերպարանքն, որ ցերեկին չես ճանչնար այն կինն, զոր առավոտուն տեսած ես...

Գյուզիս հայերը շատ ուժեղ ստամոքս ունին» (նույն տեղում, էջ 220—221)։

«... Թաղական խորհուրդն այնքան կարծիքներն բաղկացած է, որքան անդամներն որ կազմված է... Թաղական խորհուրդը յուրաքանչյուր անդամն իրեն հաճելի եղած դրությամբ կ'ուղե առաջ տանիլ վարժարանը. մին ֆրանսական դրությունը կը պաշտպանե, ուրիշ մը գերմանական դրության վրա կը հարձակի, երրորդ մը անգղիական դրությունը իբրև փրկարար միջոց կը նկատե, չորրորդ մը թրքական դրութենեն մազի չափ չչեղիր, հինգերորդ մը ավստրիական դրությունը կը փաստաբանե, և կարծիքներուն այս անհամաձայնության մեջ վարժարանը կը գոցվի...» (նույն տեղում, էջ 143)։

«Նկարագրություն դիմաց և բնավորության մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» և «Պատույտ մը Պոլսո թաղերու մեջ» երկերում ուրիշ համընկնումներ ևս կան, որ ավելորդ ենք համարում հանգամանորեն մեջ բերել, քանի որ եղածները բավական են հանգելու այն եզրակացության, որ «Նկարագրություն» շարքի հեղինակը ևս Հ. Պարոնյանն է։ Այս դեպքում միայն բացատրելի են «Պատույտ»-ի մեջ առկա այդչափ ազատորեն առնված քաղվածքները։ Եվ հետո, եթե «Նկարագրություն» շարքի հեղինակը Հ. Պարոնյանը չլիներ, նրա գրական հակառակորդները ծաղր ու ծանակի կենթարկեին նրան, որպես բանագողի։

Հ. Պարոնյանի ստեղծագործական լաբորատորիան հարուստ է նման օրինակներով. 1875 թ. «Թատրոն»-ում հայատառ թուրքերեն լեզվով նա գրել է «Ֆալ պագալըմ» («Բախտ գուշակենք») շարքը, որտեղ երգիծական խաղանման բացառիկ ուժով տալիս է ժամանակի հոգևոր ու մշակութային զործիչների և հայ մամուլի բնութագիրը։ «Բախտ գուշակենք» երգիծաշարքը իր ժանրային հատկանիշներով շատ նման է Հ. Պարոնյանի հուշակավոր «Ազգային ջոջեր»-ին։ Երբ համեմատում ենք հայատառ թուրքերեն լեզվով գրված այդ գուշակությունները 5—6 տարի հետո լույս տեսած «Ազգային ջոջերի» համապատասխան հատվածների հետ, շատ պարզ նկատում ենք, որ երգիծաբանը օգտվել է նախորդից, կրկնելով մի շարք բնութագրումներ։ Այնուհետև՝ հայատառ թուրքերեն լեզվով գրած իր «Ալաֆրանկա» պատմվածքաշարքի

հիման վրա Հ. Պարոնյանը հետագայում գրել է «Առտնին տեսարաններ» և «Քաղաքավարության վնասները» երգիծական շարքերը ու նորից օգտվել նախորդներից: Ահա այս նույն ձևով էլ նա վարվել է «Նկարագրություն» շարքի և «Պտույտ»-ի հետ:

«Նկարագրություն դիմաց և բնավորությանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» շարքը տպագրելիս, Հ. Պարոնյանն սկզբից գրել է մի մուտք, որ ընթերցողին որոշ տարակարծությունների առիթ է տալիս. «Մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց դիմաց և բնավորությանց նկարագրությունն առ մեղ ուղղյալ ըլլալով՝ այսօրվընե կսկսինք հրատարակել»³: Սա լոկ խմբագրական հնարանք է և ուրիշ ոչինչ: Հայտնի է, որ «Ազգային ջոջեր»-ի «Տոբթոր Ռուսինյան» հատվածը լույս է տեսել «Հուշարար» ստորագրությամբ և նույնպես տպվել է խմբագրի հետևյալ ծանուցմամբ. «Թատրոնիս Հուշարարն Մեծ. Ռուսինյան էֆենտիին կենսագրությունն ղրկած ըլլալով՝ վաղվան թերթերնուս մեջ պիտի հրատարակենք պատկերովը մեկտեղ»⁴: Իսկ «Հուշարար»-ը Հ. Պարոնյանի առարկություն չվերցնող ծածկանուններից է և բանասիրական փաստարկման կարիք չունի:

Վերջապես՝ «Ես», «Դուն», «Անիկա» ծածկանունների վերծանմանը վերջնական լուծման բանալի կարող է հանդիսանալ հետևյալ ուղագրավ վկայությունը: Հ. Պարոնյանն իր խմբագրած հանդեսներում ոչնչացնող ծաղրի էր ենթարկում ժամանակակից լիբերալ թերթերի խմբագիրներին, այդ թվում և «Մամուլ»-ի խմբագիր Գ. Այվազյանին, մերկացնում նրա հետադիմական աշխարհայացքը: Իր հերթին «Մամուլ»-ն էլ պատասխանում էր նրան, ծաղրում Հ. Պարոնյանի գրելաձևը, ոճը, նրան անվանում «շոշոռդաբան», «տեխի ձորձի»⁵: Հենց այդ հանդեսի էջերում էլ տպագրվել է հետևյալ վկայությունը.

«Հետևյալ տողերն ալ մեր տելի ձորձիեն կը քաղենք.

«Հա՛հ, հա՛հ, հա՛հ, այնչափ աղվո՞ր եմ:

— Տարակույս չկա, ազնիվ, շատ աղվոր եք.

— Հա՛հ, հա՛հ, հա՛հ, հաաա՛հ...

ԴՈՒՆ

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛:

ԵՍ

— Հա՛, հա՛, հա՛, հա՛:

ԱՆԻԿԱ

— Հի՛, հի՛, հի՛, հի՛:

ՄԵՂՈՒՆ⁵:

Իսկ «Առ շոշոռդաբան» վերնագրի տակ կարդում ենք. «...Հապա ուր թողունք ասկե երկու շաբաթ առաջ նույն իսկ քու թերթիդ մեջ շարած, Ես, Դուն, Ան, Գովինըս, Դիմացինդ և այլն, միմոսական ստորագրություններդ, որոնցմով կատարյալ հիմարանոցի մը փոխված էր Մեղու հանդեսը»⁶: Այս վկայությունն արդեն «Ես», «Դուն», «Անիկա» ծածկանունների բացահայտման ծանրակշիռ փաստարկ է: «Մեղու» հանդեսի ժամանակակից «Մամուլ»-ը

³ «Թատրոն», Կ. Պոլիս, 1874, թիվ 61, հոկտեմբեր 10:

⁴ Նույն տեղում, թիվ 56, հոկտեմբեր 4:

⁵ «Մամուլ», Կ. Պոլիս, 1873, թիվ 285, մայիս 23:

⁶ «Մամուլ», Կ. Պոլիս, 1873, թիվ 340, դեկտեմբեր 1:

հաղիվ թե սխալվեր իր հակառակորդի՝ Հ. Պարոնյանի ծածկանունների խնդրում:

Ինչպես սկզբում էլ նշեցինք, «Ես», «Դուն» ծածկանուններով «Թատրոն»-ում հալատառ թուրքերեն և հայերեն լեզվով լույս է տեսել «Հին աշխարհին հալիկը, նոր աշխարհին Գարիկը» ռեալիստական երգիծավպեր: Վերջինս ուշագրավ է դարաշրջանի անցուդարձերի ճիշտ պատկերմամբ, բնավորությունների և տիպերի բազմազանությամբ, սանդղագործական միջոցների հարստությամբ: Վեպի սյուժեի հիմքում ընկած են կենցաղային կոնֆլիկտներ, սակայն, հեղինակը այնքան է խորացնում այդ կոնֆլիկտները, որ դրանք վերածվում են սոցիալ-քաղաքական մերկացումների: Վիպական դործողության հիմքում դնելով աղքատ ամուսնության խնդիրը, Հ. Պարոնյանը կենցաղային հարուստ ֆոնի վրա հանդես է բերել մի քանի տիպեր, որոնցից իրենց ռեալիստական կոնկրետությամբ ու ամբողջությամբ ուշագրավ են ալաթուրքա (ավանդապահ) հալիկը և ալաֆրանկա (եվրոպայում) Գարիկը:

Այժմ արդեն հիմք ունենք ասելու, որ դա Հ. Պարոնյանի գրչի արդասիքն է, և նրա ստեղծագործության այդ արժեքավոր մասը դուրս է մնացել հեղինակի ղրական ժառանգության հետադուրսների ուշագրությունից:

НОВОВЫЯВЛЕННЫЙ САТИРИЧЕСКИЙ РОМАН АКОПА ПАРОНЯНА

МАРГАРИТ КРГАТБАШЯН

Резюме

В сатирической газете «Татрон» (1874—1877 гг.) был опубликован ряд произведений с псевдонимами «Ес» («Я»), «Дун» («Ты»), в их числе два пространных произведения — «Хачик старого мира, Габик нового мира» и «Описание типа и характера наших соотечественников различных кварталов столицы» («Հին աշխարհին հալիկը, նոր աշխարհին Գարիկը» և «Նկարագրություն դիմաց և բնավորության մայրաքաղաքիս դահլան թաղերու ազգային»)). Последнее по своему жанру напоминает произведение А. Пароняна «Прогулка по кварталам Полиса» («Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ»)). Сравнение одноименных глав этих произведений выявляет совпадение многих отрывков. Это приводит к выводу, что автором «Описания» является А. Паронян. Кроме того, ключом к раскрытию псевдонимов «Ес», «Дун», «Аника» («Он») послужили некоторые факты, обнаруженные в газете «Мамул». Они убедительно показывают, что эти псевдонимы принадлежат А. Пароняну и рассматриваемые произведения по праву входят в его литературное наследие.